ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ 2010-2011թթ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2011 թվականի ընթացքում ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացվել է 43030 քաղաքացիական գործ, որից՝

- 2667 գործով /6,2%/ հայցադիմումը վերադարձվել է,
- 261 գործով /0,6%/ հայցադիմումի ընդունումը մերժվել է,
- 40102 /93,2%/ գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Վարույթ ընդունված 40102 գործերից՝

- 25993-ով /64,8%/ կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 15439-ը /վճիռների 59,4%/, հայցի մասնակի բավարարմամբ՝ 2904-ը /վճիռների 11,2%/, հայցի մերժմամբ՝ 2450-ը /վճիռների 9,4%/, վարույթի կարճմամբ՝ 5200-ը /վճիռների 20%/, ընդ որում՝ կարճված վճիռներից 1404-ով /վճիռների 5,4%/ հաստատվել է կնքված հաշտության համաձայնությունը,

(ընդհանուր առմամբ կայացվել է 28949 դատական ակտ՝ 2667+261+25993+28),

- 28 հայց թողնվել է առանց քննության,
- 297 գործ ուղարկվել են ըստ ընդդատության, 32 գործ միացվել են մեկ վարույթում,
- 13752-ը՝ /վարույթ ընդունված գործերի 34,3%/ անավարտ է:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2010 թվականի ընթացքում ստացվել է 44163 քաղաքացիական գործ, որից՝

- 2464 գործով /5,6%/ հայցադիմումը վերադարձվել է,
- 237 գործով /0,5%/ հայցադիմումի ընդունումը մերժվել է,
- 41462 /93,9%/ գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Վարույթ ընդունված 41462 գործերից 28341-ով /68,3%/ կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 16806-ը /վճիռների 59,2%/, հայցի մասնակի բավարարմամբ՝ 3290-ը /վճիռների 11,6%/, հայցի մերժմամբ՝ 2668-ը /վճիռների 9,5%/, վարույթի կարճմամբ՝ 5577-ը /վճիռների 19,7%/, ընդ որում՝ կարճված վճիռներից 1098-ով /վճիռների 3,9%/ հաստատվել է կնքված հաշտության համաձայնությունը,

(ընդհանուր առմամբ կայացվել է 31114 դատական ակտ՝ 2464+237+28341+72),

- 72 հայց թողնվել է առանց քննության,
- 13049-ը՝ /վարույթ ընդունված գործերի 31,4%/ փոխանցվել 2011 թվական:

Այսպիսով, 2011 թվականի ընթացքում առաջին ատյանի դատարաններում քաղաքացիական գործերի թիվը նվազել է 1133-ով /44163-43030=1133/՝ մոտ 2,6%-ով /1133:44163*100=2,6%/: Հայցադիմումի ընդունումը մերժելու որոշումների թիվն ավելացել է 24-ով /261-237=24/՝ մոտ 9,2%: Վերադարձված հայցադիմումների թիվն ավելացել է 203-ով /2667-2464=203/՝ մոտ 8,3%:

Այսպիսով, 2011 թվականի ընթացքում կայացված 28949 դատական ակտերով կողմերի միջև հաշտության համաձայնություն է կնքվել 1404-ով՝ 5,4%-ով, այսինքն՝ մոտ 21 քաղաքացիական գործից 1-ն ավարտվել է հաշտության համաձայնությամբ, մինչդեռ 2010 թվականի ընթացքում կայացված 31114 դատական ակտերով կողմերի միջև հաշտության համաձայնություն է կնքվել 1098-ով՝ 3,9%-ով, այսինքն՝ մոտ 28 քաղաքացիական գործից 1-ն ավարտվել է հաշտության համաձայնությամբ:

ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԴԻՄՈՒՄՆԵՐ

ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2011 թվականի ընթացքում ստացվել է 31036 վճարման կարգադրություն արձակելու դիմում, մինչդեռ 2010 թվականի ընթացքում ստացվել է 29875 վճարման կարգադրություն արձակելու դիմում: Այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2011 թվականին ստացված վճարման կարգադրությունների թիվն աճել է 1161-ով (31036-29875=1161) 4%:

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2011 թվականի ընթացքում ստացվել է 2508 սնանկության վերաբերյալ դիմում, մինչդեռ 2010 թվականի ընթացքում՝ 1970 դիմում: Այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2011 թվականին ստացված սնանկության վերաբերյալ դիմումների թիվն աճել է 538-ով (2508-1970=538) 27%:

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2011 թվականի ընթացքում ՀՀ վարչական դատարանում ստացվել է 15444 գործ, որից՝

- 665 գործով /4,3%/ հայցադիմումը վերադարձվել է,
- 490 գործով /3,2%/ հայցադիմումի ընդունումը մերժվել է,
- 14289 գործ /92,5%/ ընդունվել է վարույթ:

Վարույթ ընդունված 14289 գործերից՝

- 6082-ով /42,6% կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 2380-ը /վճիռների 39,1%/, հայցի մասնակի բավարարմամբ՝ 1008-ը /վճիռների 16,6%/, հայցի մերժմամբ՝ 1024-ը /վճիռների 16,8%/, վարույթի կարճմամբ՝ 1670-ը /վճիռների 27,5%/,

(ընդհանուր առմամբ կայացվել է 7237 դատական ակտ՝665+490+6082).

- 8207-ը՝ /ստացված գործերի 53,1%, վարույթ ընդունված գործերի 57,4%/ անավարտ է:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ վարչական դատարանում 2010 թվականի ընթացքում ստացվել է 10744 գործ, որից՝

- 837 գործով /7,8%/ հայցադիմումը վերադարձվել է,
- 387 գործով /3,6%/ հայցադիմումի ընդունումը մերժվել է,
- 9520 գործ /88,6%/ ընդունվել է վարույթ:

Վարույթ ընդունված 9520 գործից 5437-ով /57,1% կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 2184-ը /վճիռների 40,1%/, հայցի մասնակի բավարարմամբ՝ 474-ը /վճիռների 8,7%/, հայցի մերժմամբ՝ 1566-ը /վճիռների 28,9%/, վարույթի կարճմամբ՝ 1213-ը /վճիռների 22,3%/,

(ընդհանուր առմամբ կայացվել է 6661 դատական ակտ՝ 837+387+5437).

- 4083-ը՝ /42,8%, ստացվածների 38%/ փոխանցվել է 2011 թվական:

Այսպիսով, 2011 թվականի ընթացքում վարչական գործերի թիվն ավելացել է 4700-ով (15444-10744=4700)՝ 43,7%-ով, *այսինքն՝ ակնհայտ է ՀՀ վարչական դատարանի գերծանրաբեռնվածությունը*:

2011 թվականի ընթացքում 8,4%-ով ավելացել են պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ակտերը վիճարկելու վերաբերյալ գործերը՝ կազմելով 1993, մինչդեռ 2010 թվականին այդ ցուցանիշը եղել է 1839:

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԴԻՄՈՒՄՆԵՐ

ՀՀ վարչական դատարանում 2011 թվականի ընթացքում ստացվել է 73426 վճարման կարգադրություն արձակելու դիմում, իսկ 2010 թվականի ընթացքում՝ 62471 վճարման կարգադրություն արձակելու դիմում: Այսինքն՝ ՀՀ վարչական դատարանում 2011 թվականին ստացված վճարման կարգադրությունների թիվն աճել է 10955-ով (73426-62471=10955) 17,5%: *Փաստորեն, վճարման կարգադրությունների պարագայում ևս ակնհայտ է ՀՀ վարչական դատարանի գերծանրաբեռնվածությունը:*

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

2011 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանում ստացվել է 3767 գործ *((ընդհանուր իրավասության դատարաններում ավարտված քաղաքացիական գործերի 13%-ը* (3767:28949*100=13%)), որից՝

- 382 գործով /10,1%/ բողոքները վերադարձվել են և կրկին չեն ներկայացվել,
- 3323 /88,2%/ գործով բողոքներն ընդունվել են վարույթ,
- 62 /1,7%/ գործով բողոքները մակագրվել են, որոնց վերաբերյալ դատարանը դեռևս դիրքորոշում չի հայտնել:

Վարույթ ընդունված 3323 բողոքներից՝

- 1725 գործով /վարույթ ընդունված գործերի 52%/ բողոքները մերժվել են,
- 489 գործով /14,7%/ դատական ակտն ամբողջությամբ բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության,
- 210 գործով /6,3%/ դատական ակտը մասնակի բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության,
- 46 գործով /1,4%/ դատական ակտը բեկանվել և կարճվել է,
- 273 գործով /8,2%/ դատական ակտը բեկանվել և փոփոխվել է,
- 21 գործով /0,6%/ դատական ակտը բեկանվել և թողնվել է առանց քննության,
- 123 գործով /3,7%/ միջանկյալ ակտը վերացվել է,
- 31 գործով /1%/ վերաքննիչ վարույթը կարճվել է,
- 405 գործ /12,2%/ անավարտ է:

(ընդհանուր առմամբ կայացվել է 3300 (3323-405+382) դատական ակտ)

Այսինքն՝ ստացված 3767 գործերով կայացված դատական ակտերից բեկանվել է 1162-ը /30,8%/, 1725-ով /45,8%/ բողոքները մերժվել են, 382-ով /10,1%/ բողոքները վերադարձվել են, 31 գործով /0,8%/ վերաքննիչ վարույթը կարճվել է, 405 գործ /10,7%/ անավարտ է, 62 /1,8%/ գործով բողոքները մակագրվել են, որոնց վերաբերյալ դատարանը դեռևս դիրքորոշում չի հայտնել:

Համեմատության կարգով նշենք, որ 2010 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանում ստացվել է 3840 գործ *((ընդհանուր իրավասության դատարաններում ավարտված քաղաքացիական գործերի 12,3%-ը* (3840:31114*100=12,3%)), որից՝

- 352 գործով /9,2%/ բողոքները վերադարձվել են և կրկին չեն ներկայացվել,
- 3488 /90,8%/ գործով բողոքներն ընդունվել են վարույթ:

Վարույթ ընդունված 3488 բողոքներից՝

- 1628 գործով /վարույթ ընդունված գործերի 46,7%/ բողոքները մերժվել են,
- 545 գործով /15,6%/ դատական ակտն ամբողջությամբ բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության,
- 194 գործով /5,5%/ դատական ակտը մասնակի բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության,

- 87 գործով /2,5%/ դատական ակտը բեկանվել և կարճվել է,

- 352 գործով /10,1%/ դատական ակտը բեկանվել և փոփոխվել է,

- 34 գործով /1%/ դատական ակտը բեկանվել և թողնվել է առանց քննության,

- 130 գործով /3,7%/ միջանկյալ ակտը վերացվել է,

- 39 գործով /1,1%/ վերաքննիչ վարույթը կարճվել է,

- 479 գործ /13,7%/ փոխանցվել է 2011 թվական:

(ընդհանուր առմամբ կայացվել է 3361 (3488-479+352) դատական ակտ)

Այսինքն՝ ստացված 3840 գործերով կայացված դատական ակտերից բեկանվել է 1342-ը /35%/, 1628-ով /42,4%/ բողոքները մերժվել են, 352-ով /9,1%/ բողոքները վերադարձվել են, 39 գործով /1%/ վերաքննիչ վարույթը կարճվել է, 479 գործ /12,5%/ փոխանցվել է 2011 թվական:

Այսպիսով, 2011 թվականի ընթացքում՝ 2010 թվականի համեմատությամբ, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում ստացված գործերի թիվը նվազել է 73-ով (3840-3767=73) 2%, բեկանված դատական ակտերի քանակը նվազել է 180-ով (1342-1162=180) 13,4%, մերժված բողոքների քանակն ավելացել է 97-ով (1725-1628=97) 5,6%:

Այսպիսով, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2011 թվականի ընթացքում ավարտված 28949 գործերից բողոքարկվել է 3767-ը (13%), որից բեկանվել է 1162-ը (30,8%), այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2011 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 96% /28949-1162=27787:28949*100=96%/:

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

2011 թվականի ընթացքում ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում ստացվել է 1496 գործ *(վարչական դատարանում ավարտված վարչական գործերի 20,6%-ը* (1496:7237*100=20,6%)), որից՝

- 149 գործով /10%/ բողոքները վերադարձվել են և կրկին չեն ներկայացվել,

- 32 /2%/ գործով բողոքի ընթացքը լուծված չէ,

- 1315 /88%/ գործով բողոքներն ընդունվել են վարույթ:

Վարույթ ընդունված 1315 բողոքներից՝

- 706 գործով /վարույթ ընդունված գործերի 53,7%/ բողոքները մերժվել են,

- 64 գործով /4,9%/ դատական ակտն ամբողջությամբ բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության,

- 57 գործով /4,3%/ դատական ակտը մասնակի բեկանվել է և գործն ուղարկվել է նոր քննության,

- 18 գործով /1,4%/ դատական ակտը բեկանվել և կարճվել է,

- 166 գործով /12,6%/ դատական ակտը բեկանվել և փոփոխվել է,

- 100 գործով /7,6%/ միջանկյալ ակտը վերացվել է,

- 4 գործով /0,3%/ վերաքննիչ վարույթը կարճվել է,

- 200 գործ /15,2%/ անավարտ է:

Այսինքն՝ ստացված 1496 գործերով կայացված դատական ակտերից բեկանվել է 405-ը /27%/, 706-ով /47,2%/ բողոքները մերժվել են, 149-ով /10%/ բողոքները վերադարձվել են, 4 /0,3%/ գործով վերաքննիչ վարույթը կարճվել է, 232 /200+32/ գործ՝ /15,5%/ անավարտ է:

Այսպիսով, ՀՀ վարչական դատարանում 2011 թվականի ընթացքում ավարտված 7237 գործերից բողոքարկվել է 1496-ը (20,6%), որից բեկանվել է 405-ը (27%), այսինքն՝ ՀՀ վարչական դատարանում 2011 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 94,4% /7237-405=6832:7237*100=94,4%/:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում 2011 թվականի ընթացքում ստացվել է 2690 վճռաբեկ բողոք, որից 1932-ը (71,8%)՝ ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի որոշումների դեմ, 663-ը (24,6%)՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ, 29-ը (1,1%)՝ ՀՀ վարչական դատարանի դատական ակտերի դեմ, 19-ը (0,7%)՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ, 5-ը (0,2%)՝ ՀՀ տնտեսական դատարանի դատական ակտերի դեմ, 42-ը (1,6%)՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների դեմ:

Ստացված 2690 բողոքներից 2116-ը (78,7%) վերադարձվել է, 281-ն (10,4%) ընդունվել է վարույթ, 293 (10,9%) բողոքի ընթացքը 2011 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: *Ընթացք տրված 2374 (2116+281-23) բողոքներից 32-ը (1,3%) բերվել է դատախազության կողմից, 122-ը (5,1%)՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից, 2220-ը (93,6%)՝ դատավարության այլ մասնակիցների կողմից:*

Վարույթ ընդունված 281 բողոքներից՝

- 95 (վարույթ ընդունվածի՝ 33,8%) բողոք բավարարվել է (այդ թվում մասնակի)՝ որոշումը բեկանվել է,

- 20 (7,1%) բողոք բավարարվել է (այդ թվում մասնակի)՝ որոշումը բեկանվել է մասնակի,

- 18 (6,4%) բողոք մերժվել է՝ որոշումը մնացել է անփոփոխ,

- 38 (13,5%) որոշում բեկանվել է՝ օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի վճիռներին,

- 44 (15,6%) որոշում բեկանվել է և փոփոխվել,

- 7 (2,5%) բեկանվել է որոշումը և գործի վարույթը կարճվել,

- 29 (10,3%) որոշում վերացվել է,

- 3 (1,1%) վարույթ ընդունված բողոք հետ է վերցվել,

- 2 (0,7%) բողոք բավարարվել է, բեկանվել է որոշումը և հայցը թողնվել է առանց քննության

- 2 (0,7%) բողոքը բավարարվել է՝ վերանայվել է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը

- 23 (8,3%) բողոք տվյալ ժամանակահատվածում եղել են անավարտ:

Փաստորեն, 2011 թվականի ընթացքում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունված 281 վճռաբեկ բողոքներից 237-ը (95+20+38+44+7+29+2+2=237) 84,3% բավարարվել են և բեկանվել է ստորադաս դատարանի դատական ակտը:

Վարույթ ընդունված 281 բողոքներից 4-ը (1,4%) բերվել է դատախազության կողմից, 26-ը (9,3%)՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից, 251-ը (89,3%)՝ դատավարության այլ մասնակիցների կողմից:

Վերադարձված 2116 բողոքներից 28-ը (1,3%) բերվել է դատախազության կողմից, 96-ը (4,5%)՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից, 1992-ը (94,2%)՝ դատավարության այլ մասնակիցների կողմից:

ՀՀ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացված 19 վճռաբեկ բողոքներից 17-ը վերադարձվել է,1-ով բողոքը հետ է վերցվել,1-ն անավարտ է:

ՀՀ տնտեսական դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացված 5 բողոքներից 5-ը վերադարձվել են:

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացված 42 բողոքներից 36 բողոք վերադարձվել է, 2 վճռաբեկ բողոք բավարարվել և վերանայվել է վճռաբեկ դատարանի որոշումը, 4 բողոքի քննությունն անավարտ է:

ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացվել է ***1932*** վճռաբեկ բողոք:

Ստացված 1932 բողոքներից 1540-ով (79,4%) վճռաբեկ բողոքը վերադարձվել է, 187-ն (9,8%) ընդունվել է վարույթ, որից քննարկվել է 169-ը (վարույթ ընդունվածների 90,3%), 223 բողոք (18 (վարույթ ընդունված, բայց չքննարկված) + 205 (վարույթ չընդունված) = 223)՝ տվյալ ժամանակահատվածում եղել են անավարտ:

Քննարկված 169 բողոքներից՝

- 68 (քննարկվածի՝ 40,2%) բողոք բավարարվել է (այդ թվում մասնակի)՝ որոշումը բեկանվել է,

- 12 (7,1%) բողոք բավարարվել է (այդ թվում մասնակի)՝ որոշումը բեկանվել է մասնակի,

- 5 (3%) բողոք մերժվել է՝ որոշումը մնացել է անփոփոխ,

- 30 (17,7%) որոշում բեկանվել է՝ օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի վճիռներին,

- 23 (13,6%) որոշում բեկանվել է և փոփոխվել,
- 2 (1,2%) որոշում բեկանվել է և հայցը թողնվել է առանց քննության,
- 7 (4,2%) որոշումբեկանվել է և գործի վարույթը կարճվել է,
- 2 (1,2%) բողոք վարույթ ընդունելուց հետո հետ է վերցվել,
- 20 (11,8%) որոշում վերացվել է:

Այսպիսով, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացված 1932 բողոքներով բեկանվել է 162 (8,4%) դատական ակտ, որը կազմում է քննարկված 169 բողոքների 95,8%-ը: Ստացված 1932 բողոքներից 5-ով (0,3%) վճռաբեկ բողոք մերժվել է, որը կազմում է քննարկված 169 բողոքների 3%-ը:

Համեմատության կարգով նշենք, որ 2010 թվականի ընթացքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացվել է 1733 վճռաբեկ բողոք, իսկ 2011 թվականի ընթացքում ստացվել է 1932 վճռաբեկ բողոք: Այսինքն՝ 2010 թվականի համեմատությամբ 2011 թվականին ներկայացված բողոքների թիվն աճել է 199-ով (1932-1733=199) 11,5 %:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում 2011 թվականի ընթացքում ստացված 1932 վճռաբեկ բողոքներից 7-ը (0,36%) բերվել է դատախազության, 8-ը (0,41%)՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից:

Դատախազության բերած 7 վճռաբեկ բողոքներից 5-ը (71,5%) վերադարձվել է, 2-ն ընդունվել է վարույթ: Վարույթ ընդունվածներից 1-ը բավարարվել է՝ բեկանվել և օրինական ուժ է տրվել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճռին, 1-ն անավարտ է:

Համեմատության կարգով նշենք, որ 2010 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ դատախազության կողմից բերվել է 2 վճռաբեկ բողոք, որոնք վերադարձվել են:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից բերված 8 վճռաբեկ բողոքներից 6-ը (75%) վերադարձվել են, 2-ն ընդունվել է վարույթ: Վարույթ ընդունվածներից 1-ով բողոքը բավարարվել է և որոշումը բեկանվել է, 1-ն անավարտ է:

Համեմատության կարգով նշենք, որ 2010 թվականի ընթացքում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից բերված 9 վճռաբեկ բողոքներից 8-ը վերադարձվել է, 1-ը փոխանցվել է 2011 թվական:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացվել է ***663*** վճռաբեկ բողոք:

Ստացված 663 բողոքներից 489-ով (73,7%) վճռաբեկ բողոքը վերադարձվել է, 42-ն (6,3%) ընդունվել է վարույթ, որից քննարկվել է 37-ը (վարույթ ընդունվածների 88,1%), 137 բողոք (5 (վարույթ ընդունված, բայց չքննարկված) + 132 (վարույթ չընդունված) = 137)՝ տվյալ ժամանակահատվածում եղել են անավարտ:

Քննարկված 37 բողոքներից՝

- 13 (քննարկվածի՝ 35,1%) բողոք բավարարվել է (այդ թվում մասնակի)՝ որոշումը բեկանվել է,

- 1 (2,7%) բողոք մերժվել է՝ որոշումը մնացել է անփոփոխ,

- 7 (19%) որոշում վերացվել է,

- 8-ով (21,6%) որոշումը բեկանվել է՝ օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի վճռին,

- 8-ով (21,6%) որոշումը բեկանվել է և փոփոխվել:

Այսպիսով, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացված 663 բողոքներով բեկանվել է 36 (5,4%) դատական ակտ, որը կազմում է <u>քննարկված</u> 37 բողոքների 97,3 %-ը:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում 2011 թվականի ընթացքում ստացված 663 վճռաբեկ բողոքներից 31-ը (4,7%) բերվել է դատախազության, 104-ը (15,7%)՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից, իսկ 528-ը (79,6%)՝ այլ անձանց կողմից:

Դատախազության բերած 31 վճռաբեկ բողոքներից 23-ը (74,1%) վերադարձվել է, 1-ն ընդունվել է վարույթ, որը բավարարվել է՝ բեկանվել և օրինական ուժ է տրվել ընդհանուր իրավասության դատարանի վճռին, 7 բողոքի քննությունն անավարտ է:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից բերված 104 վճռաբեկ բողոքներից 90-ը (86,5%) վերադարձվել են, 7-ն ընդունվել են վարույթ, որոնք բավարարվել են, 7-ի քննությունն անավարտ է:

ՀՀ վարչական դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացվել է ***<u>79, /որից 50 բողոքը ստացվել է 2010թ-ին և չի փոխանցվել 2011թ.՝ վարույթ ընդունած լինելու պատճառով/</u>*** վճռաբեկ բողոք:

Ստացված 79 բողոքներից 29 (36,7%) վճռաբեկ բողոքը վերադարձվել է, 50-ն (63,3%) ընդունվել է վարույթ, որոնք ամբողջությամբ քննարկվել են:

Քննարկված 50 բողոքներից՝

- 14 (քննարկվածի՝ 28%) բողոք բավարարվել է (այդ թվում մասնակի)՝ որոշումը բեկանվել է,

- 8 (16%) բողոք բավարարվել է (այդ թվում մասնակի)՝ որոշումը բեկանվել է մասնակի,

- 12 (24%) բողոք մերժվել է՝ որոշումը մնացել է անփոփոխ,

- 13 (26%) որոշում բեկանվել է և փոփոխվել,

- 1 (2%) բողոք վարույթ ընդունելուց հետո հետ է վերցվել,

- 2 (4%) որոշում վերացվել է:

Այսպիսով, ՀՀ վարչական դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում ստացված 79 բողոքներով բեկանվել է 37 (46,8%) դատական ակտ, որը կազմում է քննարկված 50 բողոքների 74 %-ը:

ՀՀ վարչական դատարանի դատական ակտերի դեմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում 2011 թվականի ընթացքում ստացված 79 վճռաբեկ բողոքներից 1-ը (1,3%) բերվել է դատախազության կողմից, որը բավարարվել է, 17-ը (21,5%)՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից, իսկ 61-ն (77,2 %)՝ այլ անձանց կողմից:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի բերած 17 վճռաբեկ բողոքներն ընդունվել են վարույթ, որից 3 բողոք մերժվել է, 1-ով դատական ակտը բեկանվել և գործն ուղարկվել է նոր քննության, 5-ով դատական ակտերը բեկանվել են մասնակի, 8-ով դատական ակտերը բեկանվել և փոփոխվել են:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանում 2011 թվականի ընթացքում կայացված 3300 /3323-405+382=3300/ դատական ակտերից բողոքարկվել է 1932-ը (58,5%), որից բեկանվել է 162-ը (8,3%), այսինքն՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում 2011 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 95,1% /3300-162=3138:3300*100=95,1%/, իսկ բողոքարկված դատական ակտերից կայունությունը կազմում է 91,6% /1932-162=1770:1932*100=91,6%/:

Այսպիսով, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում 2011 թվականի ընթացքում կայացված 1264 /149+1315-200=1264/ դատական ակտերից բողոքարկվել է 663-ը (52,4%), որից բեկանվել է 36-ը (5,4%), այսինքն՝ ՀՀ վարչական դատարանում 2011 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 97,1% /1264-36=1228:1264*100=97,1%/, իսկ բողոքարկված դատական ակտերից կայունությունը կազմում է 94,5% /663-36=627:663*100=94,5%/:

Այսպիսով, քաղաքացիական գործերով ընդհանուր կայունությունը կազմում է 95,4% /Քայլ 1-ին՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թիվը՝ 1162, գումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից քաղաքացիական գործերով բեկանված դատական ակտերի թվին՝ 162, ստացվել է 1324 բեկանված դատական ակտ, Քայլ 2-րդ՝ ընդհանուր իրավասության դատարաններում ավարտված դատական ակտերի թվից՝ 28949-ից, հանվել է 1324 բեկանված դատական ակտերի թիվը, ստացվել է 27625, այսինքն՝ 27625 դատական ակտ թողնվել է անփոփոխ, ուստի դատական ակտերի կայունությունը կկազմի 95,4% /28949-1324=27625:28949*100=95,4%/:

*Այսպիսով, վարչական գործերով ընդհանուր կայունությունը կազմում է 93,4% /Քայլ 1-ին՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թիվը՝ 405, գումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից բեկանված դատական ակտերի թվին՝ 73 /36+37/, ստացվել է 478 բեկանված դատական ակտ, Քայլ 2-րդ՝ ՀՀ վարչական դատարանում ավարտված դատական ակտերի թվից՝ 7237-ից, հանվել է 478 բեկանված դատական ակտերի թիվը, ստացվել է 6759, այսինքն՝ 6759 դատական ակտ թողնվել է անփոփոխ, ուստի դատական ակտերի կայունությունը կկազմի 93,4% /7237-478=6759:7237*100=93,4%/:*

ԸՆԴՀԱՆՈՒՐ

Այսպիսով, առաջին ատյանի դատարանների դատական ակտերի ընդհանուր կայունությունը կազմում է *96,3%*

/քայլ 1-ին՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թիվը՝ 1162, գումարվել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թվին՝ 405, գումարվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թվին՝ 300, գումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից բեկանված քաղաքացիական գործերով դատական ակտերի թվին՝ 162, գումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից բեկանված վարչական գործերով դատական ակտերի թվին՝ 73 /36+37/, գումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից բեկանված միջնորդություններով և քրեական գործերով դատական ակտերի թվին՝ 28, ստացվել է 2130 բեկանված դատական ակտ,

քայլ 2-րդ՝ առաջին ատյանի դատարաններում ավարտված դատական ակտերի թվից՝ *57275*-ից /28949+7237+3608+17481/, հանվել է 2130 բեկանված դատական ակտերի թիվը, ստացվել է 55145, այսինքն՝ 55145 դատական ակտ թողնվել է անփոփոխ, ուստի դատական ակտերի կայունությունը կկազմի 96,3% /57275-2130=55145:57275*100=96,3%/: